



### ***Չարգելի՛ հյուրեր, գործընկերներ՛, գիտաժողովի մասնակիցներ՛, տիկնա՛յք և պարոնա՛յք***

Ողջունում եմ բոլորիդ «Բոլոնիայի գործընթացը և կրթական բարեփոխումները անցումնային տնտեսություն ունեցող երկրներում. հիմնահարցերը և զարգացման հեռանկարները» խորագրով գիտաժողովի անթիվ:

Չետխորհրդային տարիներին կարծես քայքայվել ու տարերային բնույթ էր կրում մեր երկրների կրթական համակարգը, քանի որ այլևս չկար այն ավանդական աշխատաշուկան, որտեղ բոլոր մասնագետներն անխտիր աշխատանք ունեին: Փոխվել էին ժամանակները, փոխվել էին արժեքները: Արդեն այլ էր նաև թե՛ աշխատաշուկան, թե՛ նրա պահանջները: Չետխորհրդային երկրները իրենց հայացքն ուղղեցին դեպի արևմուտք, որտեղ իր բուռն ծաղկումն էր ապրում Բոլոնիայի գործընթացը (1999թ.-ից ի վեր): Անցումնային տնտեսություն ունեցող որոշ երկրներ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը (2005թ.) ինտեգրվեցին Բոլոնիայի գործընթացին:

Մեր բուհի այս գիտաժողովը միտված է վեր բարձրացնելու ԱՊՀ երկրների կրթական համակարգի խնդիրները ոչ միայն բուհերում, այլև միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններում:

Հուսով եմք, որ գիտաժողովում հնչած զեկուցումները, քննարկումները և առաջարկությունները կնպաստեն ինտեգրման գործընթացի արդյունավետությանը: Բոլորին մաղթում եմ բեղմնավոր և արգասաբեր աշխատանք:

***Լաուրա Մկրտչյան***

*Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական  
համալսարանի ռեկտոր*

### ***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

#### **Լաուրա Մկրտչյան**

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր, Եվրոպական ռեկտորների ակումբի անդամ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ***Գլխավոր խմբագիր՝***

#### **Գրիշա Ղարիբյան**

ԵՊՀ տնտեսագիտության անբիռնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ

### ***Պատասխանատու քարտուղար՝***

#### **Ալբերտ Ոսկանյան**

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

### **Խմբագրական կոլեգիա՝**

1. **Հրանտ Աբրահամյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր
2. **Հարություն Մարգարյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի կրթության որակի ապահովման ներբուհական կենտրոնի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
3. **Արմեն Ճուղուրյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
4. **Աբդիմանապ Բեկտուրգանով** – Ի. Ժանսուգուրովի անվան Ժետիսուի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ղազախստանի Հանրապետության ԳԱԱ թղթակից անդամ
5. **Լազատ Երկինբաևա** – Ի. Ժանսուգուրովի անվան Ժետիսուի պետական համալսարանի ուսումնամեթոդական գծով պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
6. **Ստեփան Ծաղիկյան** – Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
7. **Աշոտ Խոյեցյան** – Երևանի պետական համալսարանի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահ
8. **Հայկ Պետրոսյան** – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

9. **Նաիրա Հակոբյան** – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության և ստանդարտացման վարչության պետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
10. **Սերգեյ Պոցելուև** – Հարավդաշնային համալսարան, տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր
11. **Արմեն Հակոբյան** – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
12. **Լիդա Սահակյան** – Երևանի պետական բժշկական համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի, մանակավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
13. **Սուսաննա Կազդանյան** – Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու
14. **Քրիստինե Դադյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս, լեզուների և դրանց դասավանդման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու
15. **Նարինե Սուլումոյան** – Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
16. **Ջեմմա Հասրաթյան** – (Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա) ՀԿ նախագահ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԼԱՌԻԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր,  
Եվրոպական Ռեկտորների Ակումբի անդամ,  
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ԲՈՒՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Հոդվածը վերաբերում է Բոլոնիայի գործընթացի կարևորագույն տարրերից մեկին՝ ակադեմիական շարժունությանը: Նկարագրված է ուսանողության շարժունության վիճակը Հայաստանում և ընդհանրապես աշխարհում: Հոդվածում արվել են մի շարք առաջարկություններ՝ Հայաստանի ուսանողների շարժունության դինամիկան բարելավելու համար: Ակադեմիական շարժունության աճը իր հերթին կխթանի կրթության որակի բարձրացմանը:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** Բոլոնիայի գործընթաց, կրթության որակ, կրեդիտային համակարգ, ակադեմիական շարժունություն, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ:

### **ԼԱՌՐԱ ՄԿՐՏՉՅԱԼ**

Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ռեկտոր,  
Եվրոպական Ռեկտորների Ակումբի անդամ,  
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

### **ԱԼԲԵՐՏ ՈՍԿԱՆՅԱԼ**

Ավ.Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտական  
քաղաքականության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր,  
տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

### **ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱԼ**

Ավ.Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի գիտական գծով  
առաջատար մասնագետ

## **ԲՈԼՈՆՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Հոդվածում ներառված են Բոլոնիայի գործընթացի հիմնական զարգացումները՝ սկսած նախապատմությունից մինչև մեր օրերը: Այդ զարգացումներին զուգընթաց շարադրված են Երևանի Ա.Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանում կատարված համահունչ բարեփոխումները՝ երկաստիճան, ապա կրեդիտային, գիտելիքների գնահատման, մոդուլային ուսուցման և այլ համակարգերի մշակումն ու ներդրումը ուսումնական գործընթաց: Ներկայացված են մոդուլային ուսուցման հետ կապված զարգացման ու ներդրման անհրաժեշտության հիմնավորումները և ինքնագնահատման ու որակի ապահովման մեթոդական ժամանակակից մոտեցումները:

***Հանգուցային բառեր և արտահայտություններ.*** բարձրագույն կրթության միասնական տարածք, կրթության որակի ապահովում, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգ, ինքնավերլուծություն, ինքնագնահատում, կրեդիտային համակարգ, մոդուլային ուսուցում:

**ԱՐԴԻՄԱՆԱՊ ԲԵԿՏՈՒՐՉԱՆՈՎ**

ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Ղազախստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի  
թղթակից անդամ

**ԼԱՉՉԱՏ ԵՐԿԻՆԲԱԵՎԱ**

Առաջին պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ  
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(Ի.Ժանսուլգուրովի անվ. Ժեոխուսյան պետական համալսարանի  
օրինակով)**

Հոդվածում հիմնավորվում է Ղազախստանի Բոլոնյան գործընթացին մասնակցելու անհրաժեշտությունը: Բացահայտվում է մասնակցության նպատակը՝ եվրոպական կրթության մուտքի ընդլայնում, Ղազախստանի բարձրագույն կրթության որակի հետագա բարձրացում, ինչպես նաև ուսանողների և դասախոսների շարժունության աճ:

\* \* \*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԱՆՅԱՆ**

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի կրթության որակի ապահովման ներբուհական կենտրոնի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝ ԲՈՒՅԵՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ**

Հոդվածը նվիրված է 21-րդ արդիականիսդիրներից մեկին՝ Բոլոնիայի գործընթացին: Անդրադարձել ենք ՀՀ աշխատաշուկայի գեղերային բնութագրմանը որպես՝ բուհերի առաքելության կողմնորոշիչ: Դիտարկվում է բուհերի առաքելությունը: Վերլուծությունների հիման վրա տրվում են կոնկրետ առաջարկներ:

*Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում, աշխատաշուկայի գեղերային բնութագիր, բուհերի առաքելություն:*

**ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒԹՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարան

**ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՂՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Քննարկվում են կրեդիտային համակարգի արդյունավետ կիրառման հիմնական խոչընդոտները Հայաստանի համալսարաններում և առաջարկվում են կրեդիտների փոխանակման ակտիվացման ուղիներ: Մասնավորապես հիմնավորվում է պետական համալսարանների կողմից այլընտրանքային կրթօջախներից ստացվող կրեդիտների ճանաչումը՝ ակադեմիական կրեդիտների կուտակումը ու փոխանցումը դիտարկելով որպես կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման համակարգ:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝* կրեդիտային համակարգ, կրեդիտների փոխանակում, ակադեմիական կրեդիտների կուտակում, շարունակական կրթություն:

\* \* \*

**ԼՅՈՒԴԿԻԳ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

*Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հումանիտար  
ֆակուլտետի դեկան*

**ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի ուսամսական  
գծով պրոռեկտոր*

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ**

Հոդվածում Բոլոնիայի գործընթացի համատեքստում քննարկվում են Էկոլոգիական դաստիարակության մի շարք խնդիրներ: Անդամակցելով Բոլոնիայի գործընթացին՝ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանը բարձրագույն կրթության ոլորտում իրականացնում է բարեփոխումներ և լուծում է մի շարք գլոբալ հիմնախնդիրներ, որոնց շարքում իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունեն Էկոլոգիական դաստիարակության հիմնահարցերը:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ. Էկոլոգիական որակներ, կենսաբանական արդյունավետություն, Էկոդաստիարակություն, Էկոլոգիական դաստիարակություն, Էկոլոգիական տրամաբանություն, կենսոլորտի գենոֆոնդ, Էկոհամակարգեր:*

**ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ՀՐԱՅՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*«Սյունիք» ինստիտուտի իրավագիտության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու*

**ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացվում է արդի պայմաններում աշխատաշուկայի՝ մասնագիտական կրթության համակարգին ներկայացվող պահանջների ուսումնասիրության արդյունքները, որոնք կարող են արդյունավետ օգտագործվել մասնագիտական կրթական ծրագրերի մշակման գործընթացում:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ աշխատաշուկա, մասնագիտական որակներ, անձնային որակներ, առանցքային կոմպետենցիա, կրթության մակարդակ, կրթական ծրագիր:*

\* \* \*

**ԲԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,  
Ավետիք Սկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական Համալսարանի տնտեսագիտության ամբիոնի վարիչ

**ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Ավետիք Սկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական Համալսարանի ուսամսական գծով պրոռեկտոր

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդվածում Բոլոնիայի գործընթացի համատեքստում քննարկվում է տնտեսագիտության տեսության մեթոդաբանության վերաբերյալ որոշ հարցեր, որոնց իմացությունը ուսանողությանը հնարավորություն կտա ձեռք բերելու համակարգված գիտելիքները և հատուկ պատկերացում կազմել տնտեսագիտության տեսության կողմից լուծված հիմնախնդիրների մասին:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ. տնտեսական համակարգ, նյութական բարիքներ, ռեսուրսներ, պահանջմունքներ, ռացիոնալ վարքագիծ, տնտեսական մտածելակերպ, այլընտրանքային գործունեություն, ընտրության ազատություն, արդյունավետ գործունեություն:*



**ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱԶՂԱՆՅԱՆ**

Հոգեբանական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս

**ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՌԴ ԵՎ ՀՀ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հոդվածը նվիրված է 21-րդ դարի կարևորագույն խնդիրներից մեկին՝ բարձրագույն կրթության արդիականացմանը:

Դիտարկվում են նորարարական ձևերի ուսուցումը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում: Բացահայտվում են կրթության նորարարական մեխանիզմների և ռազմավարությունների էությունն ու բովանդակությունը: Առանձնացվում են նորարարական կրթության որոշ ասպեկտներ՝ որպես նորարարական ընկալում, նորարարական մտածողություն ձևավորող համակարգ: Ուսումնասիրության արդյունքի հիման վրա արվում են եզրակացություններ և առաջարկություններ:

\* \* \*

**ՆՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ

**ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ- ՈՒՄ**

Քննարկվում են ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների ֆինանսա-կազմակերպչական և մեթոդաբանական հիմնախնդիրները: Մասնավորապես, ընդգծվում է կրթական ծառայությունների արտահանման ենթակառուցվածքների ձևավորման անհրաժեշտությունը:

Բացահայտվել են մասնագիտական կրթության մրցունակության և գրավչության բարձրացման գործոնները Բոլոնիայի գործընթացի համատեքստում:

*Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգ, բարեփոխումներ, կրթական ծառայություններ, Բոլոնիայի գործընթաց, մասնագիտական կրթության մրցունակություն:*

**ԲԱՏԻՄԱ ՄՈՒԿԱՇԵՎԱ**

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, Պետական Կառավարման Ակադեմիա  
Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա

**ՄՈՒԽՏԱՐԻՄԱ ԺԵՏՊԻՍԲԱՇԵՎԱ**

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,  
տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
Գազպոտրեբսոյուզի կարկանդինական տնտեսագիտական համալսարան,  
ք. Կարագանդա

## **ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՂԱՍԱԽՍՏԱՆՈՒՄ**

Հոդվածում դիտարկվում է Ղազախստանի կրթական գործընթացի բարեփոխումների արդի հարցերը՝ կապված Բոլոնյան գործընթացի դրույթների իրականացմանը: Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքային դրույթները իրականանում են հաջողությամբ: Ղազախստանի Որակավորումների ազգային շրջանակի ստեղծումը վկայում է զարգացող միտումների մասին, որն ուղղված է Բոլոնյան գործընթացների շրջանակներում սովորողների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը:

### **ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### **ԼԻԼԻԹ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

### **ԱՐՈՒՍՅԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

## **ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացնում են ներառական կրթության համակարգի ներդրման եվ մասնագետների պատրաստման հիմնախնդիրները: Ոլորտում առկա, ինչպես նաև կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների սոցիալականացման հիմնախնդիրները, դրանց լուծման ճանապարհները լուսաբանվում են հետազոտության արդյունքների հիման վրա: Հեղինակները, ներառական կրթության համակարգի ներդրման հարցում, Էապես կարևորելով դասավանդող կազմի պատրաստման և վերապատրաստման հարցերը, ներկայացնում են իրենց կողմից կազմված «-Ներառական կրթության տեսություն և պրակտիկա» ուսումնական առարկայի ծրագիրը, բակալավրի կրթական ծրագիրը մանկավարժական բոլոր մասնագիտությունների համար և ուսումնառության վերջնարդյունքները, որոնք մշակվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում «Հուլիսի կամուրջ» և «Առաքելություն արևելքի» հասարակական կազմակերպությունների կողմից «Կրթություն բոլորի համար» ծրագրի իրականացման շրջանակներում, Ֆինլանդիայի Ուլույի համալսարանի միջազգային փորձագետ-պրոֆեսորներ՝ Թուոմ Վիլպոլայի և Մարկո Զիելինենի համագործակցությամբ:

Վեր հանված հիմնախնդիրների լուծման համար միաժամանակ, ներկայացվում են հոդվածում արձանագրված որոշ առաջարկություններ:

**ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝** ներառում, ներառական կրթություն, սոցիալականացում, սոցիալական կոմպետենցիա, մանկավարժական գործընթաց, հատուկ կրթություն, կրթության հատուկ կարիք ունեցող երեխա, հանդուրժողականություն, բազմամասնագիտական թիմ:

**ԳԵՂԵՑԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

իրավաբանական գիտությունների թեկնածու

իրավագիտության ամբիոնի դոցենտ

Յայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Յողվածը նվիրված է բարձրագույն կրթության զարգացման միտումներին՝  
ՀՀ-ում Բոլոնյան գործընթացին միանալուց հետո: Դիտարկվում են օրենքները և  
ենթաօրենսդրական ակտերը, որոնք նպաստում են բարձրագույն կրթության  
բարեփոխումներին:

**Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝**բարձրագույն կրթություն,  
Բոլոնյան գործընթաց, օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, բարեփոխումներ,  
կրթության որակ

\* \* \*

**ՀԱԿՈՔ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

1-ին կուրսի ուսանող, քաղաքագիտության ֆակուլտետ

Բուդապեշտի կենտրոնական եվրոպական համալսարան

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Այս աշխատանքը ներկայացնում է երեք խոշոր կրթական համակարգերի  
կարճ և համառոտ համեմատական վերլուծության, որոնք ընկալվում են հեղինակի  
կողմից, որպես աշխարհում այսօր գերիշխող մոդելներ, և որոնց դիտարկումը  
կատարվել է նաև հետադարձ պատմական տեսանկյունից՝ Ամերիկյան,  
Խորհրդային և Եվրոպական (Բոլոնյան) կրթական մոդելներ: Բոլոր երեք  
մոդելներն ունեն ինչպես կողմնակիցներ, այնպես նաև հակառակորդներ, սակայն  
ընդհանուր աշխատանքի նպատակն է նշել Բոլոնյան կրթական համակարգի  
առավելությունները, համեմատելով մյուս երկուսի հետ:

## ԼԻԱՆԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մանկավարժության մագիստրոս, ուսանող, Տորոնտոյի համալսարան,  
Կրթության կառավարման ֆակուլտետ, Կանադա, Տորոնտո

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոդվածում հիմնավորվում է կրթության կառավարման մասնագիտության պատրաստումը, որը անհրաժեշտ է ունենալ հայաստանյան բուհերում:

Կրթության կառավարման ֆակուլտետի բացակայությունը բացասաբար է անդրադառնում կրթության զարգացման վրա, իսկ համալսարանների ռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, չնայած ունենալով բարձրագույն կրթություն, չունեն, ավաղ, նեղ մասնագիտական որակավորում կրթության կառավարման բնագավառում: Հայաստանի Հանրապետության բուհերում անհրաժեշտ է ստեղծել կրթության կառավարման գծով շրջանավարտների պատրաստում:

\* \* \*

## ԳԱՐԻԻՇԼ ԲԱԼԱՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,

Վ. Բոյունովի անվ. Պետական լեզվաբանական համալսարան

## ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդվածում ներկայացված են Վերահսկողության նպատակները և գործունեության արդյունավետությունը: Խոսվում է հսկողության ընթացքում խախտումներ և թերություններ հայտնաբերելու վարչական պատասխանատվության որոշ խնդիրների մասին, քննարկվում են նաև կրթական համակարգի նկատմամբ Վերահսկողության իրականացրած որոշ ձևեր:

**Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝** պետական վերահսկողություն, վարչական պատասխանատվություն, կրթական համակարգ, կրթության բնագավառի հսկողություն:

### **ԱԼԵՖՏԻՆԱ ԲԱԽՏԱՈՒԼՈՎԱ**

Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ռազմավարական զարգացման, աստիճանակարգման և հավատարմագրման  
բաժնի վարիչ,

### **ՆԱԶԳՈՒԼ ԲԱՅԳԱԲԱՏՈՎԱ**

Նորարարական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Գիտության և նորարարության բաժնի վարիչ,  
Ի.Ժանսուզուրովի անվ. Ժեոիսուսյան պետական համալսարան,  
Ղազախստան, ք.Տալդիկորգան

## **ԲՈՒՅ-ՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ**

Հոդվածում առանձնացված են կրթության, գիտության և արտադրության  
ինտեգրման հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Դիտարկվում է  
շարունակական կրթության համալիրի ստեղծման հայեցակարգը, որը  
բավարարում է Բոլոնյան գործընթացի պահանջները և ակտիվ գիտական  
որոնումներով թափանցում է կրթության փուլեր: Բացահայտվում են  
ինստիտուցիոնալ և մասնագիտացված հավատարմագրման նպատակները:

## ԱՆԱՅԻՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊԲՀ, բժշկական հոգեբանության ամբիոնի դասախոս

## ՌԻՍԱ ՕՍԻՊՅԱՆ

հոգեբանության ֆակուլտետ, 4-րդ կուրս,

ԱՎ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարան

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆՏԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոդվածում ամփոփված է Բոլոնիայի գործընթացի՝ հանձինս գործնական պարապմունքների, դերն ու նշանակությունը հոգեբանության ֆակուլտետի ուսանողների համար: Միայն տեսական գիտելիքները բավարար չեն ուսանողին լիարժեք մասնագիտական հմտություններով, գիտելիքներով ապահովելու համար: Չափազանց մեծ նշանակություն ունի հոգեբանության ֆակուլտետում գործնական պարապմունքների կազմակերպումը, քանի որ դրանք նպաստում են հոգեբանական և մասնագիտական խոչընդոտների հաղթահարմանը, մասնագետի հետագա գործունեության համար անհրաժեշտ անձնային որակների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը և գործնականում տեսական գիտելիքների կիրառմանը:

*Չանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրթական համակարգ, գործնական պարապմունքներ, մասնագիտական հմտություններ, գիտահետազոտական աշխատանքներ, տեսական և պրակտիկ գիտելիքներ:*

**ԱՆԱՅԻՏ ՂԱԶԱՐՈՍՅԱԼ**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս

**ՌԻՄԱ ՕՍԻՊՅԱՆ**

հոգեբանության ֆակուլտետ, 4-րդ կուրս

**ՅՈՒՐԱԿԱՆ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԴԵՌԱՅԱՍՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՓՈԽՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Յոդվածը նվիրված է Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հոգեբանության ֆակուլտետի գիտական հետազոտական աշխատանքին: Յոդվածում շոշափվում են ոչ լիարժեք ընտանիքներում դեռահասների և ծնողների փոխհարաբերությունները, ոչ լիարժեք ընտանիքում մեծացող դեռահասների հոգեբանական առանձնահատկությունները: Յետազոտության միջոցով բացահայտվել են բազմաթիվ հոգեբանական խնդիրներ, որոնք շատ հաճախ հանդիպում են այդպիսի ընտանիքներում:

*Յանգուցային բառեր և արտահայտություններ՝ գիտահետազոտական աշխատանքներ, դեռահաս, ոչ լիարժեք ընտանիք, մայր-դեռահաս փոխհարաբերություններ, ամուսնալուծություն, դաստիարակություն:*



## **ԲԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական Համալսարանի Ֆինանսներ ֆակուլտետի ամբիոնի վարիչ

## **ՆԱՐԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

Ֆինանսներ ֆակուլտետ, III կուրս

# **ԲՈՒՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ**

Բոլոնիայի գործընթացի կարևոր սկզբունքներից մեկը հարատև կրթության ապահովումն է, որն անհրաժեշտ է դիմակայելու սոցիալական ուղղվածության զարգացման, կյանքի որակի բարելավման մարտահրավերներին: Հոդվածում քննարկվում է կյանքի որակի վրա բացասաբար ներազդող մարտահրավերներից մեկը Էկոլոգիական ճգնաժամի հետևանքները, և առաջարկվում է բնօգտագործման և բնապահպանման տնտեսական մեխանիզմի սկզբունքները՝ ելնելով Բոլոնիայի գործընթացով նախատեսված համաեվրոպական չափանիշներից:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ Բոլոնիայի գործընթաց, Էկոլոգիական ճգնաժամ, բնապահպանության և բնօգտագործման տնտեսական մեխանիզմ:*

### **ՍԵՐՉԵՅ ՊՈՑԵԼՈՒԵՎ**

քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ,  
տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի վարիչ  
Յարավային ֆեդերալ համալսարան, ՌԴ, ք. Դոնի Ռոստով

### **ՍՈՖՅԱ ԲՈՅԿՈ**

տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ  
Յարավային ֆեդերալ համալսարան, ՌԴ, ք. Դոնի Ռոստով

## **ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ. ԱՆՑՅԱԼԻ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Յոդվածում դիտարկվում է Ռուսաստանի ընդգրկման հարցը Բոլոնյան համակարգ, հաշվի առնելով ազգային պետական կառուցման ռազմավարությունները: Յեղիևակները ընդգծում են կրթության սովետական համակարգի դրական փորձի վերաիմաստավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև հետսովետական Ռուսաստանի կրթական քաղաքականության խնդիրները: Յոդվածում ուշադրություն է դարձվում մասնավոր ԲՈԼՅ-երի հատուկ դերի վրա՝ ազգային ինտելեկտի ամրապնդման և հետսովետական տարածության վրա ինտեգրող կապերի զարգացման համար:

## **ՎԼԱԴԻՄԻՐ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

Քրեական և Քրեական դատավարական իրավունքի ամբիոնի ասպիրանտ  
Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարան, Յայաստան

## **ԲՈՒՆՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են Յայաստանի Հանրապետությունում իրավաբանական կրթության որոշ խնդիրներ: Այս հարցի վերաբերյալ վերլուծելով տարբեր գիտնականների տեսանկյունները՝ առաջ է քաշվում և հիմնավորվում սեփական մոտեցումը:

\* \* \*

### **ՕԼԵԳ ԲԱՐՆԱՇՈՎ**

Միջազգային հարաբերությունների տեսության եւ պատմության ամբիոնի  
մագիստրանտ,  
Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարան

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԵՆԹԱԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ («ՌՈՍՍՈՏՐՈՒԴՆԻՉԵՍՏՎՈ» ԴԳ ՕՐԻՆԱԿԻ ՎՐԱ)**

Հոդվածում բացվում է հանրային դիվանագիտության էությունը՝ որպես Ռոսսոտրոլնիչեստվո Դաշնային Գործակալության (ԴԳ) աշխատանքի ուղղություն: Դրա օգնությամբ հիմնավորվում է «Ռոսսոտրոլնիչեստվո» ԴԳ-ի տեղը՝ որպես ենթադիվանագիտական կառույցի: Ուշադրություն է դարձվում «Ռոսսոտրոլնիչեստվո»-ի գործունեությանը կրթական ոլորտում՝ որպես հանրային մակարդակում գործող դիվանագիտության օրինակ:

**ԱՆԱՅԻՏ ՂԱԶԱՐՈՍՅԱԼ**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի  
հոգեբանության ամբիոնի դասախոս,

**ԱՐՄԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱԼ**

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի  
ուսանող, հոգեբանության ֆակուլտետ, 4-րդ կուրս

**ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հոդվածում ներկայացնում ենք Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի հոգեբանության ֆակուլտետի ուսումնական գործընթացի ժամանակ կատարած թմրամոլության հետ կապված հետազոտական աշխատանքը: Հոդվածում ամփոփում ենք թմրամոլության առաջացման հետ կապված որոշ տեսակետներ, ինչպես նաև դրա հոգեբանական ազդեցությունը և հետևանքները:

Հանգուցային բառեր՝ ադիկտիվ վարքագիծ, թմրամոլություն, միայնակություն, տագնապայնություն, փակ ներաշխարհ:

\* \* \*

**ԲՈՐԻՍ ԲԱԼԱՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու,  
Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան

**ՀԱՅԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

ասպիրանտ ֆիլանսների ամբիոն,  
Հայաստանի ազգային ագրարային ակադեմիա

**ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ  
ԲՈՒՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Բոլոնյան գործընթացը ոչ միայն պահանջում է միջբուհական տարածաշրջանային համագործակցություն, այլ նաև՝ կրթական ծրագրերի ինտեգրում: Միջազգային ֆիլանսական հաշվետվությունների ստանդարտների ներքո՝ (ՄՖՀՍ) քննարկվում են ՀՀ-ում իրականացվող լիզինգային գործարքների հաշվապահական հաշվառման սկզբունքների փոխակերպման հիմնախնդիրները: Հոդվածում դիտարկվում են լիզինգային գործարքների ֆիլանսական հաշվետվությունների փոխակերպման դասավանդման առանձնահատկությունները բուհերի ինտեգրման համատեքստում:

## **ԳՈՒԼՆԱՐԱ ՕՍԱՐՈՎԱ**

հոգեբանական գիտությունների թեկնածու,  
մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ,  
Միրաս համալսարան ք.Շիմկենտ, Ղազախստան

## **ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՁԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Չողվածը նվիրված է 21-րդ դարի արդիական խնդիրներից մեկին՝ ապագա մասնագետների մասնագիտական-անձնային կոմպետենտությանը: Դիտարկվում են այն բոլոր գործոնները, որոնք նպաստում են ապագա մասնագետների մասնագիտական-անձնային կոմպետենտության ձևավորմանը: Բացահայտվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ինքնազարգացումը, մասնագիտական հմտությունների զարգացումը:

\* \* \*

## **ՏԱՏՅԱՆԱ ՊՈՂՇԻԲՅԱԿԻՆԱ**

Քաղ. գիտությունների թեկնածու, դոցենտ  
Չարավդաշնային համալսարանի դոցենտ, ք.Դոնի Ռոստով, Ռուսաստան

## **ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՎՈՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ**

Չողվածում սոցիոլոգիական տեսանկյունից դիտարկվում են բարձրագույն մասնագիտական դպրոցներում շրջանավարտների հմտությունների ձևավորման խնդիրները: Բացահայտվում է կրթական բարեփոխումների զարգացման նշանակությունը, բարձրագույն կրթական հաստատությունների և գործատուների միջև կապերի հաստատման կարգավորումը: Ընդգծվում է գործատուի պահանջի պարտադիր արտացոլումը շրջանավարտի կերպարում:

## ՄՈՐԱՄՍԱԴ ՌԵԶԱ ՍԱԴԵՅ ՄԵՅՄԱՆԴԻ

գիտաշխատող

Շիրազի կրթական հետազոտությունների կենտրոն

Իրանի Իսլամական Հանրապետություն

### ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԵՐՔՈ

Բոլոնյան գործընթացի ներքո ներկայացվում են մարդկային կապիտալի բնորոշման և գնահատման մասնագիտական վերլուծություններ և դրա հիման վրա կատարվել են կապիտալի քանակական չափման բարեփոխումների նոր մոտեցումներ: Մասնավորապես, մարդկային կապիտալի գնահատման առավել կարևորագույն գործոն է դիտարկվում կրթությունը և այդ հիմքով ներկայացվում է ընթացիկ ազդեցությունը ինչպես տնտեսական աճի, այնպես էլ մարդկային կապիտալի որակական փոփոխությունների վրա:

\* \* \*

#### ՌՈՒԶԱՆ ԿՈՒԼԻԿՅԱՆ

մանկավարժական գիտությունների թեկնածու,

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական

համալսարանի դասախոս

### ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԼԵԶԿԻ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

Հոդվածն առնչվում է մասնագիտական կողմնորոշման դասընթացի տարածաշրջանային բաղադրամասի ուսուցման խնդրին: Այն ցույց է տալիս, որ ապագա գործարարները, տնտեսագետները, զբոսավարները ոչ միայն պետք է կարողանան հաղորդասկզբել տվյալ լեզվակրի հետ, այլ նաև՝ ներկայացնել սեփական երկիրը, մշակույթը, պատմությունը, սովորույթները և հասարակամշակութային իրույթները:

ՀՀ կրթական համակարգը չպետք է հետ մնազարգացած երկրների բարեփոխումներից: Սկզբունքային նշանակություն ունի այն, թե ինչպես է հայմեթոդական հասարակությունը վերաբերվում կրթական համակարգի փոփոխություններին:

*Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝ երկրագիտական ենթալեզու, տարածաշրջանային բաղադրամաս, անգլերեն լեզու, բարեփոխումներ, մասնագիտական կողմնորոշման դասընթացներ:*

## **ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՏՆԵՐՈՒՄ**

### **ՍԱՄՎԵԼ ՊԻՊՈՅԱՆ**

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր

### **ԼԱՐԻՍԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսուցիչ

## **ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի (ՄԿՈՒ) բարեփոխումների համատեքստում միջազգային փորձի ուսումնասիրման և վերլուծման հիմքի վրա ձևավորվել են ՄԿՈՒ 11 ցանցեր: Այդ ցանցերի ձևավորումը թույլ կտա ավելի արդյունավետ իրականացնել ՄԿՈՒ կառավարումը և կնպաստի ՄԿՈՒ համակարգի կողմից հասարակությանը առավել բարելավված ծառայություններ մատուցելուն:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ. նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, ՄԿՈՒ ցանցեր, բարեփոխումներ:*

**ԼԻԴԱ ՍԱՅԱԿՅԱՆ**

Երևանի պետական բժշկական համալսարանի  
դեղագիտական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր մանկավարժական  
գիտությունների դոկտոր

**ՅԵՂԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի մագիստրոս

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հետխորհրդային ՀՀ հանրակրթության ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծումը լայնածավալ բարեփոխումներ էր պահանջում: Դպրոցական համակարգի Էվոլյուցիոն անցումը, նոր, ավելի կատարյալ վիճակի հանգեցրեց ժամանակի, հնարավորությունների ու նաև կրթության ոլորտում կառուցվածքային ու բովանդակային բարեփոխումների աազգային առանձնահատկությունների բախման: Հոդվածում ներկայացվում են հանրառոյունքում առաջացած հիմնախնդիրները, որոնք արդիական են առայսօր:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ Հանրակրթություն, կառավարում, բարեփոխում, դպրոցավարություն, դպրոց, նորարարություն, մանկավարժ, կրթական համակարգ, վարկային ծրագիր*

\* \* \*

**ԱՆՈՒՇ ԽԱԶԻԿՅԱՆ**

Երևանի հմ.118 դպրոցի ուսուցչուհի

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (թիվ 118 դպրոցի օրինակով)**

Հոդվածում նկարագրված է Երևանի հմ. 118 ավագ դպրոցի կայացման փորձը: Դպրոցը առանձնանում է կրթական համակարգի իր ուրույն մոտեցմանը, որտեղ կիրառվում են ուսուցման կոլեկտիվ, խմբային և այլ եղանակներ: Հոդվածում նկարագրված է բնագիտական (մասնավորապես՝ քիմիա) առարկաների մոտեցման առանձնահատկությունները, դասավանդման արդյունքները:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ. Բոլոնիայի գործընթաց, կրթական համակարգ, ուսուցման կոլեկտիվ եղանակ, համագործակցություն, ուսուցման խմբային եղանակ, երթուղիներ, փոխհաղորդման մեթոդիկա:*



## ՅԵՂԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարանի մագիստրոս

### ՏՆՕՐԵՆԻ ԿԱՏԱՐԵԼԱՏԻՊԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են կրթական բարեփոխումների արդյունքում հանրակրթության ոլորտի կառավարման դաշտում առաջադրված արդի հիմնախնդիրները և ժամանակակից տնօրենին ներկայացվող պահանջներն ու չափորոշիչները:

Յեղիևակը կատարած հետազոտությունների հիման վրա ամբողջացնում է տնօրենի արդյունավետ գործունեության նախապայմաններն ու կառավարող սուբյեկտի անհրաժեշտ որակները, որոնք նոր կրթահամակարգի ներկայիս շրջափուլում կապահովվեն դպրոցավարության բարձր ցուցանիշ:

***Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ տնօրեն, հանրակրթություն, մոդել, կառավարում, բարեփոխում, դպրոցավարություն, մենեջեր, դպրոց, նորարարություն:***

**ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԲԱՂԱԲԱ-ԻՐԱՎԱԿԱՆ,  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱԶՂԱՆՅԱՆ**

Հոգեբանական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դոցենտ, ք. Երևան, Հայաստան

**ԲՈՒՅԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՐՑԸ**

Հոդվածը նվիրված է Ե Ե 21-րդ դարի կարևորագույն խնդիրներից մեկին՝ բուհերում ուսանողների միջմշակութային հաղորդակցմանը: Համալսարանական կրթության ոլորտում վերլուծվում է միջմշակութային հաղորդակցման հարցը, դիտարկվում են մշակութային շոկի էտապները և ուսանողների միջմշակութային հաղորդակցության պատրաստվածության զարգացման խնդիրները՝ հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի հիմքի վրա: Բացահայտվում են միջմշակութային հաղորդակցման էությունը և առանձնահատկությունը, ուսանողների հաղորդակցման պատրաստվածության զարգացման յուրահատկությունները՝ պրոֆեսիոնալ գործունեության պատրաստ լինելու համար: Արված հետազոտության հիման վրա՝ արվում են եզրակացություններ և առաջարկություններ:

\* \* \*

**ՌՈՒՏԱՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս

**ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Հոդվածում բացահայտվում է Բոլոնյան համակարգի էությունը, դիտարկվում են այս գործընթացի առավելությունները և հիմնական նպատակները: Բացահայտվում են Բոլոնյան դեկլարացիայի բովանդակության կարևոր դրույթները: Հեղինակի կողմից տրվում են առաջարկություններ:

## **ՍՎԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԱԼԻՆԱ**

Տնտեսագիտության թեկնածու,

Մ. Սապարբաևի անվան Հարավդազախստանյան հումանիտար ինստիտուտի  
ավագ դասախոս, ք. Շիմկենտ, Ղազախստան

## **ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հոդվածում դիտարկվում են հիմնական կապիտալի ներդրումային մեխանիզմը Ղազախստանի գյուղատնտեսության արտադրության մեջ, գյուղատնտեսական օղակում ներդրումային մեխանիզմի կատարելագործման խնդիրները:

Դիտարկվում են ֆինանսավորման երեք հիմնական աղբյուրներ՝ ինքնաֆինանսավորում, վարկային ֆինանսավորում, իրական ներդրումներ: Վերլուծվում են գյուղատնտեսության մեջ փոքր չափով ներդրումների պատճառները և տրվում են ներդրողների մեջ հետաքրքրվածություն առաջացնելու ուղիները՝ գյուղատնտեսության զարգացման համար:

\* \* \*

## **ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԼՈՅԱՆ**

Լվովի ներքին գործերի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պետության տեսության և իրավունքի ամբիոնի դասախոս, ք. Ռավա-Ռուսկա, Ուկրաինա

## **ԱԶԱՓՆՅԱ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (XIV-XVIII ԴԴ.)**

Հոդվածում ներկայացված են հայերի արտագաղթի պատճառները և պայմանները՝ իրենց պատմական հայրենիքից դեպի Աջափնյա Ուկրաինա: Տրվում է հայերի արտագաղթի պատճառների և պայմանների բնութագիրը և ընդգծվում են այդ գործընթացի երեք փուլերը:

**ԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

իրավաբանական գիտությունների թեկածու,  
Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի դասախոս

**ՍՈՆԱ ՀԱԿՈՒԲՅԱՆ**

Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի շրջանավարտ, ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնական

## **ՀՀ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ**

Ապրանքային բորսաների մասնակիցների կողմից գործարքների կնքման առանձնահատկությունների, ինչպես նաև բորսայական ապրանքների իրավական կարգավորման հարցերի ուսումնասիրումը պայմանավորված են նրանով, որ բորսային առևտուրը միշտ ավարտվում է նրա մասնակիցների միջև գործարքների կնքմամբ միայն բացառապես ապրանքային բորսաների գործունեությանը բնորոշ օբյեկտների կապակցությամբ: Շուկայական հարաբերությունների զարգացման ներկայիս մակարդակը նույնպես անցնում է բորսայական ապրանքների տեսակների ընդլայնման և զարգացման ճանապարհով: Ապրանքային շուկայում իրականացվող գործառնությունների աճը, ապրանքային բորսայում գործարքների կնքման և կատարման կարգի օրենսդրական կարգավորման ոչ բավարար մակարդակը, բորսային օրենսդրության կիրառման պրակտիկան ցույց են տալիս, որ ապրանքային բորսաներում բորսային առևտրի գոյություն ունեցող մակարդակը ՀՀ-ում բավականաչափ զարգացած չէ և կատարելագործման կարիք ունի:

\* \* \*

**ԱՅՆՈՒՐԱ ԱԲԴԻԿԵՐԻՄՈՎԱ**

PhD դոկտորանտ,  
Մ.Սապարբանի անվ. Հարավդազախստանյան հումանիտար ինստիտուտի  
դասախոս, Շիմկենտ, Ղազախստան

## **ՂԱՍԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդվածում դիտարկվում են Ղազախստանի Հանրապետության վարչական դատավարական նորմերի հասկացությունը, սկզբունքները և տեսակները:

## ԱՐՈՒՄՅԱԿ ՄՈՒԽՍԻՆԱԳՈՅԱՆ

մանկավարժական գիտությունների թեկնածու,  
 ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, Գավառի պետական  
 համալսարանի դոցենտ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՌՈՒՄԱՑ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆԵՐՈՒՄ

Հոդվածը նվիրված է ռուսաց և հայոց լեզուներում համաձայնություն և  
 անհամաձայնություն արտահայտող շարահյուսական դարձվածքների  
 համեմատական վերլուծությանը: Հեղինակը բացահայտում է, թե, որքանով են  
 ռուսաց լեզվի շարահյուսական դարձվածքները համապատասխանում հայերենի  
 դարձվածքներին և ինչով է պայմանավորված նրանց տարբերությունը:

\* \* \*

## ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի դասախոս

## ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲԻՉՆԵՍԻ ՈԼՈՐՏՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՄԵՆԱՄԵԾ ԵՎԱՄՏԻ ԵՐԱՇԽԻՔ

Հոդվածում ներկայացվում է բիզնեսի կառավարման մագիստրոսի  
 որակավորում ունեցող մասնագետի նշանակությունը: Ցույց է տրվում  
 Հայաստանում

դրա իրացման և այդ հասկացության տարբերությունը իր դասական իմաստից:  
 Ներկայացվում է նման որակավորում ունեցող մասնագետի կարևորությունը  
 անցումային տնտեսություն ունեցող մեր երկրի համար և, ընդհանրապես,  
 ընդգծվում են այդ մասնագիտության առանձնահատկությունները և  
 առավելությունները:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝* բիզնես, անցումային  
 տնտեսություն, կրթություն, եկամուտ, ֆինանսավորման համակարգ, Բիզնես  
 կառավարում, մագիստրոս: